ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE4D-5614-436A-A564 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

գործ թիվ ԵԴ2/0613/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Աննա Ճիլաջյանի

2026 թվականի փետրվարի 2-ին քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) քննարկելով Պրո Ճին ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

Պրո Շին ՍՊ ընկերության ներկայացուցչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2025 թվականի «դեկտեմբերի» «8» «N1» որոշմամբ հայտարարված թիվ «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.01.2026թ. կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերության, «Օ Փիեռ Գրուպ ունիսվերսալ» ՍՊ ընկերության և «Գոհարիկ» ՍՊ ընկերության կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) 21.01.2026 թվականին, ժամը 15:00-ին ստեղծվել է (ներկայացրել է) հայցադիմում, որը 21.01.2026 թվականին մակագրվել է դատավորին, իսկ Համակարգում դատավորին և նրա աշխատակազմին հասանելի է դարձել նույն օրը ժամը 21:30-ին:

Հաշվի առնելով, որ այդ պահին աշխատանքային ժամն ավարտված է եղել, Համակարգում հասանելի դառնալու պահ է համարվում 22.01.2026 թվականը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ դատավորի աշխատակազմը 29.01.2026 թվականին հայցվորին տեղեկացրել է հայցադիմումում առկա թերությունների մասին, մասնավորապես՝ չէր վճարվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի սահմանված պետական տուրքը:

Հայցվորին առաջարկվել է եռօրյա ժամկետում շտկել հայցադիմումում առկա թերությունները:

Հայցվորը 30.01.2026 թվականին վճարել է օրենքով սահմանված պետական տուրքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ 2-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ, սույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-ին մասին համապատասխան, դատավորի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն հայցադիմումում առկա թերությունների մասին, սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը կամ

հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր, որոնք թերությունների մատնանշման պահին չէին բացահայտվել դատավորի աշխատակազմի կողմից, ինչպես նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները չվերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին, եթե առկա են հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ Պրո Ծին ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ մասերի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ ՀՀ Կադաստրի կոմիտեից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման

գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ Կադաստրի կոմիտեն կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պրո Շին ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2026 թվականի մարտի 16-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. ՀՀ Կադաստրի կոմիտեից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ Կադաստրի կոմիտեն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Աննա Շիլաջյան

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2026.02.02 12:01:35 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am